# Արձանագրություն N3

## Ապարանի համայնքապետարանի կարիքների համար «ԱՄԱՀ-ՀԱՐԹԱՎԱՆ-ԳՀԱՇՁԲ-18/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի մասին

Ք.Ապարան «28» Օգոստոսի 2018թ.

ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

| | |
|---|---|
| Գնահատող Հանձնաժողովի նախագահ՝ | Աբրահամյան Գոռ - Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ(ԳԱՊ) |
| Հանձնաժողովի անդամներ՝ | Կարապետյան Արկադի - Համայնքի ղեկավարի խորհրդական (ԲԱ)<br>Գալստյան Ռոբերտ – Վարչական տարածքների համակարգման և գյուղատնտեսության բաժնի պետ (ԲԱ),<br>Կարապետյան Ռադիկ – Ավագանու անդամ (ԳԱ)<br>Շահբազյան Հովհաննես - Ավագանու անդամ (ԳԱ) |
| Գնումները համակարգող | Մհեր Ամիրյան |

### 1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եզրակացության մասին

1. Ընդունել ի գիտություն որ.

1.1 «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի /այսուհետ՝ Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հարցում էր ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակցների՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների և «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող իրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ: ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է եզրակացություն: Հիմք ընդունելով Կարգի 44-րդ կետը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ մասը, գնահատող հանձնաժողովը որոշեց մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարել իրականությանը համապատասխանող:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5 դեմ - 0:*

### 2. Գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

Հիմք ընդունելով սույն արձանագրության 1-ին կետը՝ հանձնաժողովը որոշեց հաստատել գնանշման հարցման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքները.

| Մասնակցի անվանումը | Հայտի գնահատականը |
|---|---|
| «ԲԻԼԴԵՐՍ» ՍՊԸ | Բավարար |

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:*

### 3. ԱՄԱՀ-ՀԱՐԹԱՎԱՆ-ԳՀԱՇՁԲ-18/01 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակցի և պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունված որոշումը՝ «ԱՄԱՀ-ՀԱՐԹԱՎԱՆ-ԳՀԱՇՁԲ-18/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարել «ԲԻԼԴԵՐՍ» ՍՊԸ -ին:

3.2 Համաձայն "Գնումների մասին" ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի անգործության ժամկետ չի սահմանվում:

3.3 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և չորս աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակցին տրամադրել պայմանագրի նախագիծը:

4. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել հաղթող մասնակցի հետ պայմանագիր կնքելու հաջորդ աշխատանքային օրը՝ ժամը 14:00-ին:

*Ընդունվել է որոշում՝ կողմ -5, դեմ – 0*

| | | |
|---|---|---|
| Գնահատող հանձնաժողովի նախագահ | | Աբրահամյան Գոռ |
| հանձնաժողովի անդամներ՝ | | Կարապետյան Արկադի |
| | | Գալստյան Ռոբերտ |
| | | Կարապետյան Ռադիկ |
| | | Շահբազյան Հովհաննես |
| Գնումները համակարգող՝ | | Ամիրյան Մ հեր |